

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, JURISPRUDENCE, ЮРИСПРУДЕНЦИЯ



ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱԱՄԲ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՅՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԵՐՈՒՄ*

ՀՏԴ 342:340(091)

DOI: 10.52063/25792652-2021.2-87

ՌԱՑԻԿ ԽԱՆԴԱՆՅԱՆ

Հայ-Ռուսական համալսարանի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայ-Ռուսական համալսարանի դոկտորանտ, ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն rkhandanyan@yahoo.com

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել խորհրդային ժամանակաշրջանում նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ դատական վերահսկողությանը՝ որպես գործադիր իշխանության հնարավոր կամայականությունների բացառման կարևորագույն միջոցին առնչվող հիմնահարցերը:

Վերոնշյալ նպատակի իրագործումը պահանջում է հետևյալ խնդիրների լուծումը՝ խորհրդային ժամանակաշրջանում նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ ուղղակի և անուղղակի դատական վերահսկողության պարզացման ուսումնասիրությունը և կառուցակարգերի համակողմանի բացահայտումը, ինչպես նաև դատարանների լիազորությունների վերլուծությունը տվյալ ոլորտում:

Հետազոտության իրականացման ընթացքում կիրառվել են ինչպես համագիտական (պատմական մեթոդ, անալիզ, սինթեզ), այնպես էլ հատուկ (ձևական տրամաբանական, համեմատական-իրավական) մեթոդներ:

Հետազոտության ընթացքում անդրադարձ է կատարվել խորհրդային միության Գերագույն դատարանի նորմատիվ իրավական ակտերի օրինակա-նությունը գնահատելու լիազորությանը, ինչը, սակայն, որպես նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողությունն չէր կարող դիտարկվել, քանզի Գերագույն դատարանը միութենական հանրապետությունների որոշումները Միության օրենքներին հակասելու հիմքով անվավեր ճանաչելու և վերացնելու լիազորություն չուներ:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացությանը, որ խորհրդային ժամանակաշրջանի որոշ հատվածներում նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ փաստացի գոյություն է ունեցել և՛ ուղղակի, և՛ անուղղակի դատական վերահսկողություն, սակայն դրա վերաբերյալ հատուկ ու համալիր իրավակարգավորումները բացակայել են: Մասնավորապես անուղղակի դատական վերահսկողություն է իրականացվել խորհրդային ժամանակաշրջանի սկզբում և արդեն 1970-ականներից սկսած, երբ դատարանները լիազորված էին կոնկրետ գործով հրաժարվել նորմատիվ իրավական ակտերը կիրառելուց կամ գործել:

* Հոդվածը ներկայացվել է 26.05.2021թ., գրախոսվել՝ 15.06.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.06.2021թ.:

Նորմատիվ կարգադրագրերին հակառակ, իսկ ուղղակի դատական վերահսկողությունը հասցրել է արդյունքներ գրանցել միայն խորհրդային միության փլուզման նախօրեին, երբ «ԽՍՀՄ-ում սեփականության մասին» 06.03.1990 թվականի օրենքի ընդունումը նպաստեց սեփականության իրավունքի պաշտպանության մասով նորմատիվ իրավական ակտերը դատարանում վիճարկելու՝ մարդու իրավունքի պետական ճանաչմանը: Հատուկ ու համալիր իրավակարգավորումների բացակայությունը հիմնականում պայմանավորված է եղել քաղաքական նկատառումներով և իշխանությունների տարանջատման սկզբունքի բացակայությամբ:

Հիմնաբառեր՝ նորմատիվ իրավական ակտ, ուղղակի և անուղղակի դատական վերահսկողություն, օրինականություն, դեկրետ, կարգադրագիր, ԽՍՀՄ Սահմանադրություն, ԽՍՀՄ Գերագույն դատարան, սեփականության իրավունք, արքիտրաժ:

Ներածություն

1.1. Ընդհանուր դրույթներ: Խորհրդային միության հակաժողովրդավարական քաղաքական ռեժիմի պայմաններում մերժվում էր իշխանության տարանջատման սկզբունքը, այդ թվում՝ դատական իշխանությունը: Հանրահայտ փաստեր են, որ այդ ժամանակահատվածում թեև առկա էին դատարաններ, սակայն նրանք իշխանությանը ներհատուկ հատկություններով օժտված չէին: Նույնիսկ տեսականորեն դժվար էր պատկերացնել, որ խորհրդային կուսակցական ավտորիտար գաղափարախոսության պայմաններում դատարանները կարող էին օժտված լինել քաղաքական իշխանության գործունեության օրինականությունը ստուգելու իրական հնարավորությամբ:

Խորհրդային միությունում կառավարման մարմինների անհատական իրավական ակտերը հիմնականում բողոքարկվում էին վերադատության կարգով, իսկ դատական կարգով կարող էին բողոքարկվել միայն օրենքով ուղղակի նախատեսված սահմանափակ թվով դեպքերում: Ինչ վերաբերում է նորմատիվ իրավական ակտերն անմիջապես դատարան բողոքարկելուն, ապա դրա համար *հատուկ ու համալիր իրավական կարգավորումներ* ըստ էության նախատեսված չէին¹:

Այնուամենայնիվ, խորհրդային միությունում եղել են ժամանակաշրջաններ, երբ դատարանները պոզիտիվ իրավունքի տարածական մեկնաբանության հիման վրա փաստացի իրականացրել են նորմատիվ իրավական ակտերի օրինականության գնահատման լիազորություններ², օրինակ՝ ԽՍՀՄ Գերագույն դատարանի կողմից միութենական հանրապետությունների որոշումների օրինականության գնահատման հիման վրա խորհրդատվական եզրակացություններ տալու՝ 1924 թվականի պրակտիկան կամ նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ անուղղակի դատական վերահսկողության՝ 1970-1990-ական թվականների պրակտիկան:

1.2. ԽՍՀՄ Գերագույն դատարանի կողմից նորմատիվ իրավական ակտերի օրինականության գնահատումը Սահմանադրության տեսանկյունից (1924 թվական): Երիտասարդ խորհրդային միության իրավունքում Գերագույն դատարանի սահմանադրական հսկողության և նորմատիվ իրավական ակտերի օրինականության գնահատման գործառույթների տարանջատումը հստակ չէր: Այսպես՝ ԽՍՀՄ 1924 թվականի Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն՝ ԽՍՀՄ կենտրոնական

¹ Օրինականության ապահովման ոլորտում դատախազի գործառույթների հարցը դուրս է սույն աշխատանքի ուսումնասիրության առարկայից:

² Խոսքը դատարանների կողմից նորմատիվ իրավական ակտերի անվավեր ճանաչելու մասին չէ:

գործադիր կոմիտեին կից ստեղծվում է Գերագույն դատարան, որը, ի թիվս այլ իրավասությունների, ԽՍՀՄ կենտրոնական գործադիր կոմիտեի պահանջով եզրակացություն էր տալիս **Սահմանադրության տեսանկյունից** միութենական հանրապետությունների այս կամ այն որոշումների **օրինականության** վերաբերյալ (*ընդգծումը՝ հեղինակի*):

1924 թվականի Սահմանադրության հիման վրա գրված պետական իրավունքի ուսումնական ձեռնարկում նշվում է, որ Միության գերագույն դատարանը, որը հետևում է հեղափոխական օրինականության պահպանմանը, իրականացնում է բարձրագույն դատական վերահսկողության գործառնությունը (Малицкий 290), սակայն հեղինակը «Սահմանադրության տեսանկյունից օրինականություն» ձևակերպումը չի մեկնաբանել:

Սահմանադրական տեքստում օգտագործվող «Սահմանադրության տեսանկյունից օրինականություն» ձևակերպման երկակիության հետևանքով, բնականաբար, ծագելու էր այն հարցը, թե Գերագույն դատարանը միութենական հանրապետությունների իրավական ակտերի իրավաչափությունը ո՞ր չափանիշի հիման վրա է գնահատելու՝ միայն ԽՍՀՄ Սահմանադրությամբ, թե՞ նաև ԽՍՀՄ օրենքների: Այլ կերպ ասած՝ գնահատելու էր այդ ակտերի սահմանադրականությունը, թե՞ նաև օրինականությունը:

ԽՍՀՄ Սահմանադրության 43-րդ հոդվածում առկա «Սահմանադրության տեսանկյունից օրինականություն» ձևակերպումը գիտական բանավեճերի տեղիք էր տվել: Դոկտորինում գերակայում էր նշված Նորմի տարածական մեկնաբանությունը, որի համաձայն՝ միութենական հանրապետությունների որոշումների իրավաչափությունը պարզելու Նորմատիվային չափանիշը ոչ միայն ԽՍՀՄ Սահմանադրությունն էր, այլ նաև միութենական օրենսդրությունը, որն այն ժամանակ հաճախ ոչ միայն կոնկրետացնում ու զարգացնում էր Հիմնական օրենքը, այլ նաև անմիջականորեն լրացնում և Նույնիսկ ձևափոխում էր այն (Дябло 33-40; Куприц 138):

Բացի այս, սահմանադրական Նորմի նման տարածական մեկնաբանությունը բացատրվում էր նրանով, որ ԽՍՀՄ օրգանական օրենքները և համամիութենական ողջ օրենսդրությունը ԽՍՀՄ Սահմանադրության 19-րդ և 38-րդ հոդվածների համաձայն՝ պարտադիր են ԽՍՀՄ-ի ամբողջ տարածքում, ուստի դրանց չկատարելը բուն Սահմանադրության խախտում է (Винокуров 3):

Այսպիսով՝ «Սահմանադրության տեսանկյունից օրինականություն» ձևակերպման ներքո հասկացվում էր ոչ միայն Սահմանադրության անմիջական խախտումը, այլև դրա անուղղակի չկատարումը, որը դրսևորվում էր Սահմանադրությունից բխող օրգանական օրենքներին հակասող ակտեր ընդունելով:

ԽՍՀՄ Գերագույն դատարանը գործնականում Նույնպես հիմք ընդունեց «Սահմանադրության տեսանկյունից օրինականություն» ձևակերպման տարածական մեկնաբանությունը և իր եզրակացություններում նախ հաստատում էր միութենական հանրապետության որոշումների անհամապատասխանությունը այսպես կոչված օրգանական օրենքներին, այնուհետև եզրահանգում էր Սահմանադրության հոդվածների միջնորդավորված խախտման կամ դրանց չհամապատասխանելու մասին (Митюков 12):

Այսպիսով՝ ԽՍՀՄ Գերագույն դատարանը փաստացի գնահատում էր միության հանրապետությունների որոշումների համապատասխանությունը միության օրենքներին, ուստի կարելի է եզրակացնել, որ Դատարանը սահմանադրական հսկողության շրջանակներում իրականացնում էր Նորմատիվ իրավական ակտերի օրինականության գնահատման գործառնությունը¹:

¹ Այսօր Նույնպես ՌԴ Գերագույն դատարանը ՌԴ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով իրավասու է ստուգել դաշնության սուբյեկտների օրենքների համապատասխանությունը դաշնային օրենքներին:

Մինևույն ժամանակ Գերագույն դատարանի այս գործառույթը նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողություն չէր կարող համարվել, քանի որ Գերագույն դատարանը միութենական հանրապետությունների որոշումները Միության օրենքներին հակասելու հիմքով *անվավեր ճանաչելու և վերացնելու* լիազորություն չունեցրել: Այս գործառույթի շրջանակներում նա ոչ թե կայացնում էր իշխանական բնույթի որոշում, այլ ԽՍՀՄ կենտրոնական գործադիր կոմիտեին ներկայացնում էր եզրակացություն, իսկ վերջինս էլ իրավասու էր կասեցնել կամ վերացնել այդ ակտերը (ԽՍՀՄ Սահմանադրության 20-րդ հոդված):

1. Անուղղակի դատական վերահսկողությունը խորհրդային դատական պրակտիկայում

Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության նկատմամբ անուղղակի դատական վերահսկողության հատկանիշներից մեկը կոնկրետ գործերով նորմատիվ իրավական ակտը չկիրառելն է: Խորհրդային իշխանության օրոք եղել են դեպքեր, երբ իրավակիրառ մարմիններին, այդ թվում՝ դատարաններին պաշտոնապես թույլատրվել է կոնկրետ գործով հրաժարվել նորմատիվ իրավական ակտերը կիրառելուց, սակայն դատարանների կողմից կոնկրետ գործով նորմատիվ իրավական ակտերը չկիրառելու ոչ բոլոր իրավիճակները կարելի է համարել անուղղակի դատական վերահսկողություն: Այսպես՝ 1917 թվականի հեղափոխությունից հետո նոր ձևավորվող խորհրդային իշխանությունը, ելնելով հակահեղափոխականների դեմ պայքարի քաղաքական նպատակներից, պաշտոնապես թույլատրեց պետական մարմիններին չկատարել դեկրետների (օրենքների) պահանջները կամ շեղվել դրանցից (1918 թվականի Նոյեմբերի 8-ի Համառուսական արտահերթ համագումարում ընդունված «Հեղափոխական օրինականության մասին» որոշումը):

Այս ժամանակաշրջանում երիտասարդ խորհրդային դատարանների կողմից կոնկրետ գործերով դեկրետները (նորմատիվ իրավական ակտերը) չկիրառելը անուղղակի դատական վերահսկողություն չէր, քանի որ այն պայմանավորված չէր ցածր ու բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմերի հակասությունը լուծելու անհրաժեշտությամբ: Այն պաշտոնապես թույլատրված կամայականությունն էր և քաղաքական իշխանության հակառակորդների դեմ պայքարը ղյուրացնելու միջոց (*տե՛ս աշխատանքի 2.1. կետը*):

Քաղաքացիական գործերով դատարանների կողմից նորմատիվ բնույթի կարգադրագրերը չկիրառելու կամ նորմատիվ բնույթի կարգադրագրերին հակառակ գործելու պրակտիկան սահմանափակվեց 1920-ականներից սկսած: Այսպես՝ 1923-1964 թվականներին Ռուսաստանի խորհրդային ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության (այսուհետ՝ ՌԽՖՍՀ) քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածում սահմանված էր, որ որևէ գործի լուծման համար անհրաժեշտ որոշումների (ռուս.՝ *узаконений*) ու կարգադրությունների բացակայության դեպքում դատարանն այն լուծում է՝ անաջնորդվելով խորհրդային օրենսդրության ընդհանուր սկզբունքներով և աշխատավորա-գյուղացիական կառավարության ընդհանուր քաղաքականությամբ: ՌԽՖՍՀ Գերագույն դատարանը բազմիցս պարզաբանել էր, որ անթույլատրելի է հղում կատարել քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի վրա և չկիրառել գոյություն ունեցող օրենսդրությունը: Օրինակ՝ Գերագույն դատարանը 1926 թվականի թիվ 1 հրահանգչական նամակում նշել է. «Պետք է հիշել, որ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածը դատարանին իրավունք չի տալիս գործով չկիրառել աշխատավորա-գյուղացիական կառավարության՝ տվյալ հարցով ընդունած ուղղակի որոշումները կամ կարգադրությունները, եթե այդպիսիք առկա են» (Кечекьян 13-14):

Այս ժամանակաշրջանում կոնկրետ գործերով անուղղակի դատական վերահսկողություն հնարավոր չէր նաև այն պատճառով, որ բացակայում էր նորմատիվ իրավական ակտերի միջև հստակ աստիճանակարգություն (*տե՛ս աշխատանքի 2.1. կետը*):

Նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ անուղղակի դատական վերահսկողությունը գործնականում կենսագործվեց միայն 1970-ականներին: Այդ ժամանակաշրջանի դոկտրինալ աղբյուրների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ խորհրդային դատարանները կոնկրետ գործեր քննելիս երբեմն փաստում էին, որ կիրառման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը հակասում են ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերին և հրաժարվում էին կիրառել անօրինական նորմատիվ իրավական ակտերը: Այսպես՝ Նշանավոր դատավարագետ Ա. Բոնները 1970 թվականների դատական պրակտիկայի վերլուծության արդյունքում եզրակացրել է. Զաղաքացիական գործեր լուծելիս դատական մարմիններն օժտված են տեղական խորհուրդների և դրանց գործկոմների, նախարարությունների, գերատեսչությունների, հասարակական կազմակերպությունների ընդունած ենթաօրենսդրական նորմատիվ ակտերի իրավաչափությունը վերահսկելու լիազորությամբ: (...) Դատարանը պետք է համոզվի, նորմատիվ իրավական ակտ ընդունած մարմինն (...) օժտված է արդյոք իրավաստեղծ լիազորություններով, ստուգի՞ իրավաստեղծ մարմինը արդյոք չ'ի գերազանցել առարկայական և տարածքային իրավասության սահմանները և այդ ակտը արդյոք լիովին համապատասխանում է օրենքին (...): Վերահսկողությունը, որի մասին խոսք է գնում, կրում է ոչ թե ուղղակի, այլ անուղղակի բնույթ, քանի որ դրա անմիջական արդյունքը կարող է լինել ոչ թե անօրինական նորմատիվ ակտի չեղարկելը կամ փոփոխելը, այլ միայն կիրառումից հրաժարվելը» (Боннер 107):

Ն. Բոնները հստակ նշում է, որ տվյալ դեպքում խոսք է գնում անուղղակի վերահսկողության մասին, քանի որ դրա անմիջական արդյունքը ոչ թե ակտի վերացումն է կամ փոփոխությունը, այլ անօրինական նորմատիվ ակտի կիրառման մերժումը:

Այսպիսով՝ կարել է փաստել, որ 1970 թվականից սկսած խորհրդային դատարանները նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ իրականացրել են անուղղակի դատական վերահսկողություն: Մինչդեռ նույնը չի կարելի ակնհայտ ուղղակի դատական վերահսկողության մասին:

2. Ուղղակի դատական վերահսկողությունը խորհրդային իրավունքում

2.1. Ուղղակի դատական վերահսկողության բացակայությունը խորհրդային օրենսդրությունում ու պրակտիկայում (1917-1990 թվականներ): ԽՍՀՄ-ում ուղղակի դատական վերահսկողության վերաբերյալ օրենսդրական հատուկ կարգավորումները և դատական պրակտիկան մինչև 1990 թվականները բացակայել են (իսկ առանձին մասնագետների գնահատման՝ ընդհուպ մինչև ԽՍՀՄ փլուզումը (26.12.1991 թվական) (Тхабисимова и Евлоев 275) կամ մինչև 1993 թվականը) (Салищева и Хаманева 26-27):

Խորհրդային միությունում նորմատիվ իրավական ակտերի դատական վիճարկման պրակտիկայի բացակայությունը բացատրվում էր նրանով, որ «այս գործառույթի իրականացման համար պետք էր դատական իշխանությունն առանձնացվեր և ընդգրկվեր զսպումների և հակակշիռների համակարգում, ինչը մեր երկրում ըստ էության երբեք չի եղել» (Тхабисимова и Евлоев 275-276):

Խորհրդային միությունում ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ ուղղակի դատական վերահսկողության բացակայությունը կարելի է բացատրել պետության կառավարման ձևի և քաղաքական ռեժիմի առանձնահատկություններով՝ պայմանավորված առավել կոնկրետ պատճառներով: Այս ինստիտուտի ներմուծմանը խոչընդոտող հիմնական գործոններն էին՝

1. տարբեր պետական մարմինների, այդ թվում՝ գործադիր իշխանության մարմինների կողմից օրենք ընդունելու իրավասությունը,
2. օրենքների ու ենթաօրենսդրական ակտերի աստիճանակարգության անորոշությունը:

Առաջին. մինչև 1936 թվականի ԽՍՀՄ Սահմանադրության ընդունումը օրենքներ հրապարակելու լիազորություն ունեին մի քանի պետական մարմիններ: Օրինակ՝ Խորհրդային Հայաստանում օրենք ընդունելու իրավունք ունեին Խորհուրդների Համագումարը, Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը (1922 թվականի Սահմանադրության 35-րդ հոդված):

Օրենսդիր ու գործադիր գործառույթների նման խառնաշփոթի պայմաններում դժվար էր պատկերացնել ենթաօրենսդրական ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության գործնական կիրառությունը:

Միայն 1936 թվականին ընդունված Սահմանադրությամբ (*հայտնի է՝ «ստալինյան Սահմանադրություն» անվամբ*) վերացվեց բազմաթիվ մարմինների կողմից օրենք հրապարակելու իրավասությունը (Аржанов и другие 372): Խորհրդային պետական իրավունքի առաջին դասագրքում հետևողականորեն նշվում է, որ «ստալինյան Սահմանադրությունը» հստակ տարանջատում է պետական իշխանության մարմինների գործառույթները. օրենքներ ընդունելու իրավասություն ունեն միայն ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդը (Вышинский 316, 346)¹:

Երկրորդ. Գերագույն Խորհրդի օրենքների և Գերագույն Խորհրդի Նախագահության (այն իրականացնում էր պետության գլխին հատուկ գործառույթներ) հրամանագրերի հարաբերակցության հարցում առկա էր անորոշություն: Այսպես՝ 1936 թվականի Սահմանադրությամբ Գերագույն Խորհրդի Նախագահությունը թեև օրենք ընդունելու լիազորությամբ այլևս օժտված չէր, սակայն տեսության մեջ նշվում էր Նախագահության հրամանագրով օրենքը փոփոխելու հնարավորության մասին. «Գերագույն Խորհրդի Նախագահությունը իրավասու էր ընդունել հրամանագրեր, որոնք կարող էին պարունակել նոր իրավական նորմեր և **փոխել գործող օրենքը** (*ընդգծումը՝ հեղինակի*): Նման հրամանագիրը պետք է հաստատվեր Գերագույն Խորհրդի առաջիկա նստաշրջանում» (Кукушкин 159): Իսկ առանձին հեղինակներ նշում էին, որ հրամանագիրը իրավունքի աղբյուրների համակարգում նախատեսելու նպատակն այն է, որ անհրաժեշտության դեպքում այն զարգացնի, փոփոխի և լրացնի օրենքը (Носов 105):

Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով օրենք փոխելն ըստ էության նշանակում էր ընդունել օրենքին հակասող հրամանագիր, որը պարզապես որակվում էր ոչ թե անօրինականություն, այլ օրենքի փոփոխություն (Вышинский 316, 346)²: Նման

¹ Դասագրքում նշված է. «Այն հստակ սահմանում է միակ օրենսդիր մարմնի և գործադիր մարմինների իրավասությունը՝ բացառելով այդ մարմիններին պատկանող գործառույթները խառնելու որևէ հնարավորություն: Դա ամբողջությամբ բխում է մեր պետության պահանջից, որում գործառույթների միախառնում կամ միմյանց հետ խաչվելը չի կարող թույլատրվել, գործադիր-կարգադրիչ ակտերը չեն կարող փոխարինել օրենքին, պետական իշխանության բարձրագույն մարմինների և ենթակա կառավարման մարմինների միջև տարբերությունը չի կարող ջնջվել»:

² 1936թ. Սահմանադրության 49-րդ հոդվածում Գերագույն Խորհրդի Նախագահության լիազորությունները սահմանող նորմում միայն ամրագրված էր հրամանագրեր ընդունելու լիազորությունը, սակայն այդ նորմում չէր խոսվում հրամանագրերով օրենքում փոփոխություն փոփոխություններ կատարելու մասին: Այս հարցում առկա է անորոշություն, քանի որ Խորհրդային պետական իրավունքի առաջին դասագրքում մի կողմից նշվում է, որ հրամանագրի միջոցով ապահովվում էր օրենքի կիրառումը՝ կյանքի փոփոխվող պայմաններում, մյուս կողմից նշվում է. «Բոլոր դեպքերում հրամանագիրը կարող է ընդունվել միայն օրենքի հիման վրա և չպետք է հակասի օրենքին կամ շեղվի դրանից»:

մոտեցումը ինքնին հակասում է ենթաօրենսդրական ակտերի օրինականության գաղափարախոսությանը (Շվիկ 25)¹:

Ընդ որում, Գերագույն խորհրդի Նախագահության հրամանագրերով գործող օրենքները փոփոխելու լիազորությունը սահմանադրական ամրագրում ստացավ միայն 1977 թվականին նոր ընդունված Սահմանադրության 122-րդ հոդվածում², որից հետո պետական իրավունքի դոկտրինում վերանայվեց հրամանագրի ենթաօրենսդրական բնույթը և այն հավասարեցվեց օրենքին (Козлова и Шевцова 373): Պետական իրավունքի դասագրքերից մեկում նշվում է. «Մինչև 1977 թվականի Սահմանադրության ընդունումը հրամանագիրը համարվում էր ենթաօրենսդրական ակտ: Սակայն հրամանագրի իրավաբանական բնույթի նման բնորոշումը չի համապատասխանում ԽՍՀՄ Սահմանադրությանը և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության գործունեության պրակտիկային: Հայտնի է, որ հրամանագրերով տարբեր պատճառաբանություններով օրենքները բազմիցս չեղյալ են հայտարարվել, դրանցում կատարվել են փոփոխություններ և լրացումներ: Մինչդեռ ենթաօրենսդրական ակտը չի կարող վերացնել և լրացնել օրենքը» (Кравчук 486):

Խորհրդային ժամանակաշրջանում ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի օրինականությունը գնահատելու չափանիշների անորոշությունը պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ գործադիր իշխանության մարմինների ակտերը գործնականում (փաստացի) գերակայող էին: Այսպես՝ Գերմանական հանրային իրավունքի մասնագետ Օտտո Լուխտերհանստը խորհրդային նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգության մասին նշում է. «Խորհրդային իշխանական համակարգում նորմերի բուրգը կուսակցական և պետական մարմինների կառավարական և վարչական պրակտիկայում գլխավոր էր շրջված՝ գերագույն հեղինակություն էր ոչ թե Սահմանադրությունը, այլ, որպես կանոն, «հրամանը», «կարգադրությունը», «իրահանգը» կամ «նամակը», կարճ ասած գործադիր մարմինների վարչական ակտերը: Նորմատիվ իրավական ակտերի հիերարխիան de facto փոխարինվել էր գործադիր ակտերի հիերարխիայով: Բարձրագույն ռանգն ունեին խորհրդային Միության կուսակցական ղեկավար մարմինների (քաղցյուրո,

¹ Ընդ որում, խորհրդային առանձին իրավաբաններ Նախագահության հրամանագրով օրենք փոխելու պրակտիկան համարում էին Սահմանադրությանը հակասող: Նրանք նշում էին, որ ԽՍՀՄ Սահմանադրությունը ճանաչում է ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը՝ որպես միակ օրենսդիր մարմինը, և քանի որ օրենքը կարող է փոխվել մեկ այլ օրենքով, ուստի այն մոտեցումը, որ հրամանագրով կարող է փոխվել օրենքը, նշանակում է, որ նման հրամանագիրը ստանում է օրենքի իրավաբանական ուժ և դրանով իսկ, մինչև դրա հաստատման պահը, վերածվում է ժամանակավոր օրենքի, ինչը հակասում է ԽՍՀՄ Սահմանադրությանը:

² 1977թ. ԽՍՀՄ Սահմանադրության 122-րդ հոդվածում ուղղակիորեն ամրագրվեց, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը Գերագույն խորհրդի նստաշրջանների միջև ընկած ժամանակահատվածում անհրաժեշտության դեպքում փոփոխություններ է կատարում ԽՍՀՄ գործող օրենսդրական ակտերում՝ դրան հաջորդած հերթական նստաշրջանին այն ներկայացնելով Գերագույն խորհրդի հաստատմանը:

Որոշ հայ մասնագետներ նշում են, որ XX-րդ դարի 40-ական թվականների վերջում «իրահանգային» օրինաստեղծությունը լեզափոխվել էր՝ Սահմանադրության մեջ ուղղում մտցնելով: Արդյունքում օրենսդրական նորմերի մեծ մասը ներմուծվում էր Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրերի միջոցով՝ հետագայում վավերացվելով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից: Տե՛ս Սաֆարյան Գ. Իրավաստեղծ գործունեության և օրենսդրության զարգացման հիմնահարցերը ՀՀ-ում (պատմա-տեսական վերլուծություն): Եր.: 2004, էջ 62: Հեղինակը չի հստակեցրել, թե Սահմանադրության ո՞ր նորմում է նման փոփոխություն կատարվել: Բանն այն է, որ «ԽՍՀՄ Սահմանադրության (հիմնական օրենքի) տեքստում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 25.02.1947թ. ԽՍՀՄ օրենքով Սահմանադրության 49-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ, որտեղ Գերագույն խորհրդի նախագահության՝ օրենքները փոփոխող հրամանագրեր ընդունելու հատուկ լիազորություն նախատեսված չէ:

կենտրոնական կոմիտեի քարտուղարություն, կենտկոմի բաժիններ), կոմկուսի ռեգիոնալ մակարդակի գլխավոր մարմինների, այդ թվում և Հայկական կոմկուսի ցուցումները: Ամենացածր ռանգը de facto ունեին ԽՍՀՄ և միութենական հանրապետությունների սահմանադրությունները: Վարչական մարմինների և դատարանների առօրյայում սրանք գործնականում ոչ մի նշանակություն չունեին: Օրենքները ևս միայն չնչին դեր էին խաղում, գոնե հենց այն պատճառով, որ վարչական իրավունքի մեծ հատվածներ կարգավորված էին ոչ թե օրենքներով, այլ միայն գործադիր իշխանության ենթաօրենսդրական ակտերով՝ ԽՄԿԿ կենտկոմի և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի համատեղ որոշումներով, ԽՍՀՄ և միութենական հանրապետության նախարարների խորհրդի որոշումներով» (ԹՅՎՄԱՅԱՆ և ՈՐԻՀՆԵՐ 83-84):

Այսպիսով՝ Նորմատիվ իրավական ակտեր ընդունող տարբեր մարմիններին օրինաստեղծ գործառույթ վերապահելու՝ Նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգության խառնաշփոթի պայմաններում բացակայում էին ենթաօրենսդրական Նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ ուղղակի դատական վերահսկողության ինստիտուտի նախատեսման բավարար պայմանները:

Ասվածից չպետք է եզրակացնել, որ ուղղակի դատական վերահսկողության ինստիտուտը խորհրդային իրավաբանական դոկտրինին առհասարակ անծանոթ էր:

2.2. Ուղղակի դատական վերահսկողության կայացման դոկտրինալ նախադրյալները: Խորհրդային իրավագիտությունը կտրել էր կապը ցարական Ռուսաստանի իրավագիտության հետ, հետևապես մոռացության էին մատնվել Նաև Ն. Կորկունովի՝ տեղական իշխանության մարմինների՝ Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողության մասին դատողությունները և օրենսդրական կարգավորումները (ԽՍՆՊԱՆՅԱՆ 35-44):

Այնուամենայնիվ, խորհրդային իրավագիտությունում Նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության հարցերին անդրադարձ կատարվել է այն ժամանակ, երբ վարչական արդարադատության հարցերի քննարկումը կրկին դարձավ արդիական: Այսպես՝ 1973 թվականին Դ. Չեչոտը հրապարակեց վարչական արդարադատության մասին առաջին համալիր աշխատանքը, որում նա նշում էր, որ վարչական արդարադատության որոշ համակարգերում թույլատրվում էր միայն այնպիսի վեճերի քննությունը, որոնցում բարձրացվում է տույլեկտիվ իրավունքների պաշտպանության հարց, իսկ մյուսներում (Ֆրանսիա, Գերմանիա) նախատեսված է նաև կառավարման մարմինների ընդունած Նորմատիվ ակտերի օրինականության վիճարկման հնարավորություն (Чечот 30):

Պետք է փաստել, որ այդ աշխատանքում Նորմատիվ իրավական ակտերի օրինականության վիճարկման մասին տեսական դատողությունները մակերեսային էին և վերաբերում էին այլ պետությունների համակարգերին:

Խորհրդային իրավագիտությունում Նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ վերահսկողության հարցերը քննարկման առարկա դարձան նաև 1970-1980 թվականներին՝ պետական արբիտրաժների վերահսկողության ինստիտուտի շրջանակներում: Այդ ժամանակաշրջանում առաջարկվում էր տնտեսավարող մարմինների ղեկավարների կամային ակտերը վերացնելու մասին ցանկացած պահանջի քննությունը վերապահել արբիտրաժներին (Шелестов 65), սակայն կառավարման մարմինների՝ Նույնիսկ անհատական ակտերի օրինականության նկատմամբ արբիտրաժային վերահսկողություն նախատեսելը հանդիպեց դիմադրության: Ընդ որում, արբիտրաժային վերահսկողության ներմուծման դեմ բերվող փաստարկներից մեկն էլ այն է, որ վերահսկողություն կարող է սահմանվել նաև Նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ (Логинов 46), մինչդեռ արբիտրաժային վերահսկողության կողմնակիցների կարծիքով՝ այդ ինստիտուտը ներմուծելու

առաջարկությունները վերաբերում էին ոչ թե կառավարման մարմինների նորմատիվ, այլ անհատական բնույթի ակտերին (Клейн 96-109):

«ԽՍՀՄ Պետական արբիտրաժի մասին» 30.11.1979 թվականի օրենքի 19-րդ հոդվածը սահմանում էր, որ Պետական արբիտրաժը (...) մերժում է կողմերի պահանջները, եթե այդ պահանջները հիմնված են օրենսդրությանը չհամապատասխանող պետական կառավարման մարմնի ակտի վրա: Այս նորմից բխում էր, որ եթե արբիտրաժը կողմի պահանջների հիմքում ընկած ակտը համարում էր օրենսդրությանը հակասող, ապա ոչ թե այն ճանաչում էր անվավեր, այլ միայն մերժում էր կողմի պահանջը: Այլ կերպ ասած՝ խոսք էր գնում անուղղակի վերահսկողության մասին:

Ինչ վերաբերում է պետական կառավարման մարմինների ակտերի բնույթին, ապա տվյալ ժամանակաշրջանի գրականության մեջ գերակայում էր այն մոտեցումը, որ Օրենքի 19-րդ հոդվածը վերաբերում է միայն անհատական ակտերին: Պրակտիկան նույնպես ընթացել էր այն ուղղությամբ, որ գնահատվում էր միայն անհատական ակտերի օրինականությունը: Միևնույն ժամանակ 1980-ականների վերջում առանձին երիտասարդ գիտնականներ հետևողականորեն նշում էին, որ Օրենքի 19-րդ հոդվածում խոսք է գնում պետական կառավարման մարմինների ընդունած բոլոր ակտերի մասին, ուստի առկա են բոլոր հիմքերը եզրակացնելու, որ այդ հոդվածը տարածվում է նաև կառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ: Ընդ որում, նրանք առաջարկում էին նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ վերահսկողության գործառնույթի գործնական իրականացման համար նախատեսել հատուկ կառուցակարգեր (Подольский 98-100):

2.3. Ուղղակի դատական վերահսկողության ներմուծումը «ԽՍՀՄ-ում սեփականության մասին» 06.03.1990 թվականի օրենքով: Ինչպես նշվեց, առանձին մասնագետներ նշում են, որ ընդհուպ մինչև ԽՍՀՄ փլուզումը ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ ուղղակի դատական վերահսկողության ինստիտուտը բացակայում էր: Իսկ վարչական իրավունքի մասնագետները նշում են. «Քաղաքացու իրավունքները և ազատությունները խախտող գործողությունները և որոշումները դատարան բողոքարկելու մասին» 1993 թվականի ապրիլի 27-ի Ռուսաստանի Դաշնության օրենքը էապես ընդլայնեց դատարանի՝ որպես քաղաքացու և վարչական ապարատի միջև արբիտրի լիազորությունները: Նկատի ունենալով այն փաստը, որ պետական իշխանության մարմինները մյուսներից առավել հաճախ են ընդունում նորմատիվ իրավական ակտեր, օրենսդիրն անհրաժեշտ համարեց այդ օրենքով բողոքարկման առարկա դարձնել ոչ միայն անհատական, այլև նորմատիվ իրավական ակտերը: Նորմատիվ իրավական ակտերի բողոքարկման նորամուծությունը մեր օրենսդրությանը նախկինում հայտնի չէր» (Салищева и Хаманева 26-27):

Նորմատիվ իրավական ակտերը անմիջապես դատարան բողոքարկելու մարդու իրավունքի՝ պետական ճանաչման ժամանակահատվածը հստակեցման կարիք ունի: ԽՍՀՄ-ը իրավաբանորեն դադարել է գոյություն ունենալ 26.12.1991 թվականին, մինչդեռ նորմատիվ իրավական ակտերը դատարանում վիճարկելու մարդու իրավունքը սեփականության իրավունքի պաշտպանության մասով պետական ճանաչում ստացավ ոչ թե 1991 թվականի վերջին կամ 1993 թվականին, այլ 1990 թվականին, երբ դատարանները «ԽՍՀՄ-ում սեփականության մասին» 06.03.1990 թվականի օրենքի 34-րդ հոդվածը (սեփականության իրավունքը խախտող ակտերի անվավերությունը) մեկնաբանեցին այնպես, որ այդ հիմքով կարող են վիճարկել նաև նորմատիվ իրավական ակտերը:

Դատական գործերից մեկով քաղաքային դատարանները քաղաքացու դիմումով և վերը նշված օրենքի 34-րդ հոդվածի հիման վրա 08.01.1991 թվականի որոշմամբ անօրինական ճանաչեցին ժողովրդական դեպուտատների քաղաքային խորհրդի 25.11.1990 թվականի որոշումը, որով արգելվում էր տվյալ շրջանի սահմաններից ապրանք դուրս բերել: Վճռաբեկ ատյանը առաջին ատյանի դատարանի այդ որոշումը

վերացրեց և վարույթը կարճեց այն պատճառաբանությամբ, որ նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ գործերը ենթակա չեն դատարանի քննությանը: ՌԽՖՍՀ Գերագույն դատարանի նախագահի տեղակալի առարկության հիման վրա Յակուտիայի Գերագույն դատարանի նախագահությունը 20.06.1991 թվականին վերացրեց վճռաբեկ ատյանի որոշումը, իսկ առաջին ատյանի դատարանի որոշումը թողեց անփոփոխ՝ դրանով իսկ ճանաչելով նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողությունը:

Այս գործով սկիզբ դրվեց նորմատիվ իրավական ակտերի վիճարկման և բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերին հակասելու հիմքով նորմատիվ իրավական ակտերն անվավեր ճանաչելու պրակտիկայի ձևավորմանը: Դատարանները, մեկնաբանելով նշված օրենքի 34-րդ հոդվածը, ելնում էին նրանից, որ այդ հոդվածում նշված «ակտեր» հասկացությունը վերաբերում է ոչ միայն անհատական նշանակության ակտերին, այլև սեփականության իրավունքը խախտող ցանկացած ակտի, այդ թվում՝ նորմատիվ իրավական ակտերին: Այս պրակտիկայի հիման վրա հետագայում դատավարական օրենսդրության մեջ կատարվեցին համապատասխան փոփոխություններ (Хабриева и Лазарев 57):

Եզրակացություն

Եթե քաղաքական իշխանությունը, ելնելով իր քաղաքական ռեժիմի առանձնահատկություններից, չի ընդունում իշխանության բաժանումը և դատական իշխանության գոյությունը, բնականաբար չի կարող հանդուրժել հատկապես կառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ անմիջական դատական վերահսկողության գոյությունը:

Խորհրդային միությունում կառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության վերաբերյալ հատուկ ու համալիր իրավական կարգավորումներ նախատեսված չէին:

Նման կարգավորման բացակայությունը պայմանավորված էր տարաբնույթ պատճառներով, սակայն ընդհանրացնելով դրանք՝ կարելի է նշել երկու հիմնական պատճառ՝

1. տարբեր պետական մարմինների, այդ թվում՝ գործադիր իշխանության մարմինների կողմից օրենք ընդունելու իրավասությունը,
2. օրենքների ու ենթաօրենսդրական ակտերի աստիճանակարգության անորոշությունը:

Խորհրդային միությունում նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ անուղղակի դատական վերահսկողության պրակտիկան ձևավորվել է 1970-ականներից սկսված:

Մինչև ԽՍՀՄ փլուզումը իշխանությունները առանձին սուբյեկտիվ իրավունքների մասով ճանաչեցին նորմատիվ իրավական ակտերը անմիջապես դատարան բողոքարկելու հնարավորությունը: Պատմաիրավական վերլուծության, այդ թվում՝ խորհրդային դատական ակտերի ուսումնասիրության արդյունքում հնարավոր է պնդել, որ նորմատիվ իրավական ակտերը դատարանում վիճարկելու մարդու իրավունքը (սեփականության իրավունքի մասով) պետական ճանաչում ստացավ ոչ թե 1991թ.-ի վերջին (ԽՍՀՄ փլուզումը) կամ 1993-ին, այլ 1990-ին, երբ դատարանները «ԽՍՀՄ-ում սեփականության մասին» 06.03.1990թ.-ի օրենքի 34-րդ հոդվածը (սեփականության իրավունքը խախտող ակտերի անվավերությունը) մեկնաբանեցին այնպես, որ այդ հիմքով կարող են վիճարկել նաև նորմատիվ իրավական ակտերը:

Օգտագործված գրականություն

1. Թովմասյան, Հրայր և ուրիշներ. *Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունք*, Երևան, Բավիթ, 2011.
2. Խասնդանյան, Ռաֆիկ. «Նորմատիվ իրավական ակտերի Օրինականության նկատմամբ դատական վերահսկողությունը Ռուսական կայսրությունում». *Դատական իշխանություն*, 2021, էջ 35-44.
3. Аржанов, Михаил и другие. *Теория государства и права*. Москва: Государственное издательство юридической литературы, 1949.
4. Винокуров, Александр. «О конституционном надзоре». *Вестник Верховного Суда СССР*, №1, 1925.
5. Вышинский, Андрей. *Советское государственное право*. Москва: Юридическое издательство НКЮ СССР, 1938.
6. Боннер, Александр. *Применение нормативных актов в гражданском процессе*. Москва: Проспект, 2017.
7. Дябло, Всеволод. «Развитие Конституции Союза ССР в процессе конституционной практики». *Советское право*, № 3, 1926, С. 33 – 40.
8. Кечекьян, Степан. «О толковании законов судом». *Право и Жизнь*, № 1, 1928, С. 13-14.
9. Клейн, Нина. «Арбитражный контроль за законностью актов управления». *Проблемы совершенствования советского законодательства*. Труды. Министерство юстиции СССР. № 14, 1979, С. 96 – 109.
10. Козлова, Екатерина и Шевцова, Валентина. *Советское государственное право*. Москва, Высшая школа, 1978.
11. Кравчук, Степан. *Советское государственное право*. Москва: Юридическая литература, 1980.
12. Кукушкин, Юрий и Чистяков, Олег. *Очерк истории Советской Конституции*. Москва: Политгиздат, 1987.
13. Куприц, Николай. *Из истории науки советского государственного права*. Москва: 1971.
14. Логинов, Павел. «Что нужно отразить в законе о Госарбитраже СССР». *Хозяйство и право*, № 5, 1978.
15. Малицкий, Александр. *Советское государственное право (очерки)*. Харьков: Юридическое издательство НКЮ УССР, 1926.
16. Митюков, Михаил. «О некоторых теоретических аспектах судебного конституционного надзора в СССР (1924-1933 гг.)». *Вестник Томского государственного университета*, № 292, 2006. С. 7-16
17. Носов, Евгений. «Юридическая природа указа в советском государстве». *Ученые записки Ленинградского юридического института*, № 4, 1947, С. 105.
18. Подольский, Юрий. «Некоторые вопросы контроля за законностью нормативных актов». *Тезисы докладов на теоретической конференции аспирантов Института государства и права АН СССР и Юридического факультета МГУ имени М. В. Ломоносова*, Москва, 1986, С. 98 – 100.
19. Постановление Пленума Верховного Суда РФ от 25.12.2018 N 50 «О практике рассмотрения судами дел об оспаривании нормативных правовых актов и актов, содержащих разъяснения законодательства и обладающих нормативными свойствами», http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_314764/. Доступно: 06 июня 2021.
20. Постановление IV Всероссийского Чрезвычайного съезда Советов «О революционной законности», <https://constitution.garant.ru/history/act1600-1918/5405/>. Доступно: 06 июня 2021.

21. Салищева, Надежда и Хаманева, Наталия. *Административная юстиция и административное судопроизводство в Российской Федерации*. Москва, 2001.
22. Тхабисимова, Людмила и Евлоев, Ильяс. «История развития судебного нормоконтроля как инструмента воздействия общества на государство». *Политико-правовые механизмы формирования институтов публичной власти*, 2012, С. 273-283.
23. Хабриева, Таля и Лазарев, Валерий. *Судебная практика в современной правовой системе России*. Москва, 2017.
24. Цвик, Марк. «О подзаконности Указов Президиума Верховного Совета СССР». *Ученые записки, Харьковский юридический институт им. Л.М. Кагановича*, Харьков. № 7, 1956, С. 19-32.
25. Чечот, Дмитрий. *Административная юстиция. Теоретические проблемы*. Ленинград, 1973.
26. Шелестов, Володимир. «О расширении контрольных функций арбитража». *Правоведение*, № 5, 1968, С. 61–68.

Works Cited

1. T'ovmasyan Hrayr & owrishner. Hayastani Hanrapetut'yan y'ndhanur varchakan iravunq, Erevan, Bavigh, [General Administrative Law of the Republic of Armenia, Yerevan, Bavig] 2011.
2. Xandanyan R'afik. "Normativ iravakan akteri O'rinakanut'yan nkatmamb datakan verahskoghut'yuny' R'usakan kaysrut'yunum". *Datakan ish Khanut'yun*, 2021, e'j 35-44 ["Judicial control over the legality of normative legal acts in the Russian Empire"; *Judicial Power*, 2021, pp. 35-44.].
3. Arzhanov Mihail i drugie. *Teorija gosudarstva i prava*. Moskva: Gosudarstvennoe izdatel'stvo juridicheskoy literatury, [Theory of State and law. Moscow: State Publishing House of Legal Literature] 1949.
4. Vinokurov Aleksandr. "O konstitucionnom nadzore ". *Vestnik Verhovnogo Suda SSSR*, №1, [On Constitutional Supervision". *Bulletin of the Supreme Court of the USSR*, No. 1] 1925.
5. Vyshinskij Andrej. *Sovetskoe gosudarstvennoe pravo*. Moskva: Juridicheskoe izdatel'stvo NKJu SSSR, [Soviet State law. Moscow: Legal Publishing House of the NKJU of the USSR] 1938.
6. Bonner Aleksandr. *Primenenie normativnyh aktov v grazhdanskom processe*. Moskva: Prospekt, [Application of normative acts in civil proceedings. Moscow: Prospekt] 2017.
7. Djablo Vsevolod. "Razvitie Konstitucii Sojuza SSR v processe konstitucionnoj praktiki". *Sovetskoe pravo*. № 3, 1926, S. 33 – 40 ["The Development of the Constitution of the USSR in the Process of Constitutional Practice". *Soviet Law*. No. 3, 1926, p. 33-40].
8. Keчек'jan Stepan. "O tolkovanii zakonov sudom". *Pravo i Zhizn'*. № 1, 1928, S. 13-14 ["On the Interpretation of Laws by the Court". *Law and Life*. No. 1, 1928, pp. 13-14].
9. Klejn Nina. "Arbitrazhnyj kontrol' za zakonnost'ju aktov upravlenija". *Problemy sovershenstvovaniya sovetskogo zakonodatel'stva*. *Trudy. Ministerstvo justicii SSSR*. № 14, 1979. S. 96 – 109 ["Arbitration control over the legality of management acts". *Problems of improving the Soviet legislation. Works. Ministry of Justice of the USSR*. No. 14, 1979. pp. 96-109].
10. Kozlova Ekaterina i Shevcova Valentina. *Sovetskoe gosudarstvennoe pravo*. Moskva, Vysshaja shkola, [Soviet State law. Moscow, Higher School] 1978.
11. Kravchuk Stepan. *Sovetskoe gosudarstvennoe pravo*. Moskva: Juridicheskaja literatura, [Soviet State law. Moscow: Yuridicheskaya literatura] 1980.

12. Kukushkin Jurij i Chistjakov Oleg. Ocherk istorii Sovetskoj Konstitucii. Moskva: Politizdat, [An Essay on the History of the Soviet Constitution. Moscow: Politizdat] 1987.
13. Kupric Nikolaj. Iz istorii nauki sovetского gosudarstvennogo prava. Moskva, [From the history of the science of Soviet state Law. Moscow] 1971.
14. Loginov Pavel. "Chto nužno otrazit' v zakone o Gosarbitrazhe SSSR". Hozjajstvo i pravo, № 5, ["What Should Be Reflected in the Law on State Arbitration of the USSR". Economy and Law, No. 5] 1978.
15. Malickij Aleksandr. Sovetskoe gosudarstvennoe pravo (ocherki). Har'kov: Juridicheskoe izdatelstvo NKJu USSR, [Soviet State Law (essays). Kharkiv: Legal publishing House of the NKYU of the Ukrainian SSR] 1926.
16. Mitjukov Mihail. "O nekotoryh teoreticheskikh aspektah sudebnogo konstitucionnogo nadzora v SSSR (1924-1933 gg.)", Vestnik Tomskogo gosudarstvennogo universiteta, № 292, 2006. S. 7-16 [On Some Theoretical Aspects of Judicial Constitutional Supervision in the USSR (1924-1933)", Bulletin of Tomsk State University, No. 292, 2006. pp. 7-16].
17. Nosov Evgenij. "Juridicheskaja priroda ukaza v sovetском gosudarstve". Uchenye zapiski Leningradskogo juridicheskogo instituta. № 4, 1947. S. 105 ["The Legal Nature of the Decree in the Soviet State". Scientific notes of the Leningrad Law Institute. No. 4, 1947. p. 105].
18. Podol'skij Jurij. "Nekotorye voprosy kontrolja za zakonnost'ju normativnyh aktov". Tezisy dokladov na teoreticheskoy konferencii aspirantov Instituta gosudarstva i prava AN SSSR i Juridicheskogo fakul'teta MGU imeni M. V. Lomonosova, Moskva, 1986. S. 98 – 100. ["Some issues of control over the legality of regulatory acts". Abstracts of reports at the theoretical conference of postgraduate students of the Institute of State and Law of the USSR Academy of Sciences and the Faculty of Law of the Lomonosov Moscow State University, Moscow, 1986. pp. 98-100].
19. Postanovlenie Plenuma Verhovnogo Suda RF ot 25.12.2018 N 50 "O praktike rassmotrenija sudami del ob osparivanii normativnyh pravovyh aktov i aktov, sodержashhih raz#jasnenija zakonodatel'stva i obladajushhih normativnymi svojstvami" [Resolution of the Plenum of the Supreme Court of the Russian Federation of 25.12.2018 N 50 "On the Practice of Consideration by Courts of Cases on Challenging Normative Legal Acts and Acts Containing Explanations of Legislation and Having Normative Properties"], http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_314764/, 06 iyunja 2021 [06 June, 2021].
20. Postanovlenie IV Vserossijskogo Chrezvychajnogo s#ezda Sovetov «O revoljucionnoj zakonnosti» [The Resolution of the IV All-Russian Extraordinary Congress of Soviets "On Revolutionary Legality"], <https://constitution.garant.ru/history/act1600-1918/5405/>, 06 iyunja 2021 [06 June, 2021].
21. Salishheva Nadezhda i Hamaneva Natalija. Administrativnaja justicija i administrativnoe sudoproizvodstvo v Rossijskoj Federacii. Moskva, [Administrative Justice and Administrative Legal Proceedings in the Russian Federation. Moscow] 2001.
22. Thabisimova Ljudmila i Evloev Il'jas. "Istorija razvitiya sudebnogo normokontrolja kak instrumenta vozdejstviya obshhestva na gosudarstvo". Politiko-pravovye mehanizmy formirovaniya institutov publichnoj vlasti. 2012. S. 273-283 ["The History of the Development of Judicial Norm Control as an Instrument of Society's Influence on the State". Political and Legal Mechanisms for the Formation of Public Power Institutions. 2012. pp. 273-283].
23. Habrieva Taliya i Lazarev Valerij. Sudebnaja praktika v sovremennoj pravovoj sisteme Rossii: Moskva, [Judicial Practice in the Modern Legal System of Russia: Moscow] 2017.

24. Cvik Mark. "O podzakonnosti Ukazov Prezidiuma Verhovnogo Soveta SSSR". Uchenye zapiski, Har'kovskij juridicheskij institut im. L.M. Kaganovicha, Har'kov. № 7, 1956. S. 19-32 ["On the Legality of Decrees of the Presidium of the Supreme Council of the USSR". Scientific notes, L. M. Kaganovich Kharkiv Law Institute, Kharkiv. No. 7, 1956. pp. 19-32].
25. Chechot Dmitriy. Administrativnaja justiciya. Teoreticheskie problemy. Leningrad, [Administrative justice. Theoretical problems. Leningrad] 1973.
26. Shelestov Volodimir. "O rasshirenii kontrol'nyh funkcij arbitrazha". Pravovedenie, № 5, 1968, S. 61–68. ["On the Expansion of the Control Functions of Arbitration". Jurisprudence, No. 5, 1968, pp. 61-68.].

CERTAIN ISSUES CONCERNING JUDICIAL CONTROL OVER LEGALITY OF NORMATIVE LEGAL ACTS IN SOVIET LAW

RAFIK KHANDANYAN

Russian-Armenian University,

Department of Theory of Law and Constitutional Law,

Ph.D. in Law, Associate Professor,

Doctoral Student,

Yerevan, Republic of Armenia

The aim of the article is to examine the development and mechanisms of direct and indirect judicial control over normative legal acts in Soviet Union and to look into power of the courts in that sphere.

In the course of the study, both scientific (the principle of historicity, analysis, synthesis) and special (formal logical, comparative legal) methods were applied.

During the research the competence of the Supreme Court of the Soviet Union on assessment of legality of normative legal acts was examined, which, as concluded, can not be considered as control over legality of normative legal acts, as the Supreme Court of the Soviet Union did not have the competence to invalidate that acts.

The study also resulted in the following conclusion: during certain periods of the existence of the Soviet Union there was actually both direct and indirect judicial control over the legality of normative legal acts, but there was no special and comprehensive legal regulation regarding it. More accurately, indirect judicial control was practiced at the beginning of the establishment of the USSR and also after 1970s and was manifested in the power of the courts to refuse to apply specific regulatory legal acts or to act not in accordance with them. As for the direct judicial control, it was only realized on the eve of the collapse of the Soviet Union by adopting «Law on Property in the USSR» on 06.03.1990 and it led to the recognition of the right to contest normative legal acts concerning property in courts. The absence of certain and complex legal regulations on direct and indirect judicial control was because of some political observations and the absence of principle of the separation of powers.

Keywords: *normative legal act, direct judicial control, indirect judicial control, legality, decree, order, Constitution of the Soviet Union, Supreme Court of the Soviet Union, property law.*

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ СУДЕБНОГО КОНТРОЛЯ ЗА ЗАКОННОСТЬЮ НОРМАТИВНЫХ ПРАВОВЫХ АКТОВ

РАФИК ХАНДАНЯН

*доцент кафедры теории права и конституционного права
Российско-армянского университета,
кандидат юридических наук, доцент,
докторант Российско-армянского университета
г. Ереван, Республика Армения*

Цель данной статьи заключается в исследовании некоторых проблем относительно судебного контроля за законностью нормативных правовых актов в период советской власти как важнейшего способа пресечения возможных злоупотреблений со стороны исполнительной власти.

Задачами статьи являются изучение развития и механизмов непосредственного и опосредованного судебного контроля за нормативными правовыми актами в период советской власти, а также исследование полномочий судов в данной сфере.

В процессе исследования были применены как общеправовые (исторический, анализ, синтез), так и специальные (формально-логический, сравнительно-правовой) методы исследования.

В ходе исследования рассматривались полномочия Верховного Суда СССР оценивать законность нормативных правовых актов, что, как было установлено, не могло рассматриваться как осуществление контроля за законностью нормативных правовых актов, так как Верховный Суд СССР не был наделен полномочиями признавать соответствующие нормативные правовые акты недействительными.

В результате исследования было сформулировано так же следующее мнение: в определенные периоды советской власти фактически существовал как непосредственный, так и опосредованный судебный контроль за законностью нормативных правовых актов, но отсутствовало специальное и комплексное правовое регулирование относительно него. В частности, опосредованный контроль осуществлялся судами в самый ранний период советской власти и уже после 1970-ых годов, что проявлялось в полномочии судов отказываться от применения конкретных нормативных правовых актов или действовать не в соответствии с ними. Начало же прямого судебного контроля за законностью нормативных правовых актов связано с принятием в 06.03.1990 году закона «О собственности в СССР», что привело к признанию со стороны государства права человека оспаривать нормативные правовые акты относительно собственности в суде. Отсутствие специального и комплексного правового регулирования было в основном обусловлено политическими причинами и отсутствием принципа разделения властей.

Ключевые слова: *нормативный правовой акт, непосредственный судебный контроль, опосредованный судебный контроль, законность, декрет, распоряжение, Конституция СССР, Верховный Суд СССР, право собственности.*